Биолог. журн. Армении, 3-4 (52), 1999

УДК 581.09

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ և ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆՈՒՅԹԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ.Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Խ.Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտ, 375001, Երևան

Հազարամյակներ շարունակ կանաչապատումը և անտառապատումը դիտվել են որպես զուտ դեկորատիվ միջոցառումներ, որի նպատակն է եղել գեղեցկացնել բնակավայրերը, լրացնել դրանց ճարտարապետական տեսքը, զարդարել անշուք լանդշաֆտները, հիմնականում թագավորական պալատների և այլ կառույցների շրջակայքում, ստեղծել որսատեղեր ազնվականների համար: Կանաչապատումը և արհեստական անտառապատումը թագավորների և ազնվականների շռայլության դրսևորումներից էին: Միայն նրանք կարող էին հսկայական ծախսերի գնով շքեղաշուք այգիներ ու անտառներ ստեղծել [6]: Պատմությանը հայտնի են Բաբելական կախովի այգիները, չինական կայսրերի ստեղծած հսկայածավալ այգիներն ու անտառները, եվրոպական թագավորների կառուցած այգիները Վերսալ, Սան-Սուսի, Իզաբելլա, Պետերգոֆ, Գատչինա և այլն: Այս այգիներն ընդգծում էին տիրակալների շռայլությունը և անբավ հարստությունը: Այգիները նախագծում էին ժամանակի ամենահայտնի ճարտարապետները և արվեստագետները (Անրի Լյուսոտր, Պյուկլեր Մոսկաու, Վարֆոլոմեյ Ռաստրելլի, Առնոլդ Ռեգել և այլն): Սակայն մեծ տիրակալների նպատակը երբեք չի եղել կանոնավորել լանդշաֆտները, միկրոկլիման, պայքարել հողերի էռոզիայի դեմ, կանոնավորել ջրային ռեժիմը:

Պատմական տեղեկությունները վկայում են, որ հին Հայաստանում հզոր տիրակալները նույնպես նման այգիներ ու պարտեզներ են ստեղծել [1]: Մենուա I հզոր թագավորը դեռ մ.թ.ա. VII դարում, Բաբելական կախովի այգու օրինակով, կառուցեց Տուշպայի կախովի այգին ավելի փոքր չափերով: Տիգրան Մեծը մ.թ.ա. I դարում ստեղծեց Տիգրանակերտի հսկայածավալ շքեղ այգիները, Երվանդ IV-ը՝ Երվանդակերտի գեղատեսիլ լանշաֆտային այգին, Վասպուրականի Գագիկ թագավորը՝ Ախթամարի դարավանդային այգին և այլն [3]: IV դարում Խոսրով Կոդակ թագավորը ստեղծեց Խոսրովի հսկայական անտառը, իսկ Վաղարշակ I թագավորը կառուցեց Կոլայի այգին [4]: Հայրենական և օտարազգի պատմաբանների վկայությամբ այդ այգիները արվեստի իսկական գլուխգործոցներ էին:

Ըստ պատմահայր Մովսես Խորենացու դեռևս մ.թ.ա. III դարի վերջերին (200-220 թթ.) Երվանդ IV թագավորը նոր մայրաքաղաք Երվանդաշատի կառուցապատման համար ստեղծեց լանդշաֆտային այնպիսի հրաշակերտ այգի, որը ժամանակակից պատկերացմամբ արվեստի գլուխգործոց էր, քանի որ ոչ միայն լրացնում էր մայրաքաղաքի ճարտարապետական կերպարը, այլև ներդաշնակություն էր կազմում շրջակա լանդշաֆտների հետ [2]:

Լանդշաֆտային ճարտարապետության արվեստը, որը ծագելով ուշ միջնադարում իր զարգացման գագաթնակետին է հասել վերջին տասնամյակներում, ներկայումս խնդիր է դնում կանաչապատումը մշտապես ներդաշնակել կառուցապատման և շրջակա միջավայրի բնապատկերների հետ, ստեղծելով մի օրգանական միասնություն: Այն, ինչին ձգտում է ժամանակակից լանդշաֆտային ճարտարապետությունը, մեր նախնիներին հայտնի է եղել դեռ 2200 տարի առաջ [2]:

Առավել զարմանալին այն է, որ մեր հեռավոր նախնիներին հայտնի է եղել անտառների և կանաչապատ տարածությունների կլիմայակարգավորիչ նշանակությունը: Պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, II դարում (160-180 թթ.) Վաղարշակ I թագավորը Կոլայի շոգ կողմում սաղարթախիտ պուրակներ ու ծաղկանոցներ ստեղծելով բարելավել է տեղանքի չոր և անբարենպաստ կլիման:

Կանաչապատման և անտառապատման միջոցով շրջակա միջավայրի բարելավման ամենածավալուն գործը Խոսրովի անտառի ստեղծումն էր Խոսրով Կոդակ II թագավորի կողմից VI դարում (330-339 թթ.): Ազատ գետի գեղատեսիլ հովիտը գրավել էր շինարար թագավորի ուշադրությունը, որը որոշեց այնտեղ կատարել լրացուցիչ անտառատնկումներ թագավորական հանգստի համար: Սակայն աշխատանքները շատ ավելի ծավալուն դուրս եկան, քան նախատեսված էր: Գառնու ամրոցից մինչև Արտաշատ, նախկին մայրաքաղաք, հսկայական ամայի տարածություններ կային (այսօրվա գնահատմամբ 21 հազար կմ), անհրաժեշտ էր դրանք անտառապատել: Արհեստական անտառապատման այդ ահռելի չափերը այսօր էլ հիացմունք

են պատճառում մասնագետներին: Բարդ տեղանքի պայմաններում, երբ չկային բարեկարգ ճանապարհներ և բացակայում էր անհրաժեշտ աշխատուժը, քանի որ Հայաստանի և Պարսկաստանի միջև երկարատև պատերազմ էր գնում, այդ գործի իրականացումը անհնարին էր թվում: Սակայն Խոսրով II թագավորը այդ գործը հայտարարեց «խաշար հանել» : Յուրաքանչյուր քաղաքի, բնակավայրի, շենքի համար ծրագիր իջեցվեց, որով թագավորական հրովարտակի համաձայն, ամեն մի անձնավորություն պարտավոր էր որոշակի թվով ծառեր տնկել իրեն հատկացված տեղամասերում: Շրջակա անտառներից մատղաշ տնկիներ, մեծ մասամբ «վայրի կաղնի», հանում էին սայլերով՝ տեղափոխելով Խոսրովի անտառ: Նախօրոք կառուցված ջրանցքը տնկարկներն ապահովում էր ոռոգման առատ ջրով: Անտառի վերին մասում կառուցվեց շքեղ «Տաճար Մայրին» (անտառի տաճար): Անտառի ներքին հատվածը անվանվեց «Խոսրովակերտ» [4]:

Այստեղ կառուցվեց թագավորի ամառային նստավայր-պալատը: Անտառում բաց թողեցին մեծ քանակությամբ վայրի կենդանիներ: Անտառապատման և դեկորատիվ պարտիզագործության համաշխարհային պատմությանը նման ծավալի անտառապատման միայն եզակի դեպքեր են հայտնի, այն էլ հին Չինաստանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ակինյան Ն.* Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1970:
2. *Թորամանյան Թ.* Նյութեր հայկական ճարտարապետության, 1, 2, Երևան, 1942, 1948:
3. *Լեո* Հայոց պատմություն, Երևան, 1946:
4. *Մովսես Խորենացի* Պատմություն Հայոց., Տփղիս, էչէփ:
5. *Ղաֆադարյան Կ.* Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952:
6. *Манандян М.А.* О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954.

Ստացվել է 11.III.1999